Արձանագրություն N 3
ՋԿ-ԳՀԾՁԲ-22/4-Ն ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 22.08.2022թ.

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սերգոյանը (ԳԱՊ)

Հանձնաժողովի անդամներ Գ. Մելիքսեթյանը, Ա. Առուշանյանը, Ա. Սիմոնյանը, Ա. Մակարյանը և Ս. Ալեքսանյանը:

Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Համաձայն «ՋԿ-ԳՀԾՁԲ-22/4-Ն» ծածկագրով ընթացակարգի (ՀՀ Տավուշի մարզի Աչաջուր և Սևքար (Իջևան համայնք) բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում) հրավերի 8.9 կետի՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը (12.08.2022թ.) և մասնակիցներին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ այն է 15.08.2022թ. շտկել անհամապատասխանությունները.

Մասնակից կազմակերպությունների կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանությունները շտկվել են:

Հանձնաժողովի որոշումը

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԾՁԲ-22/4-Ն ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ին:
2. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին,
3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետը 10 օրացուցային օր է,
4. ՋԿ-ԳՀԾՁԲ-22/4-Ն ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.25 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը պատվիրատուն կծանուցի ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ _____ Ա. Սերգոյան

անդամներ	_____	Գ. Մելիքսեթյան
	_____	Ա. Մակարյան
	_____	Ա. Սիմոնյան
	_____	Ա. Առուշանյան
	_____	Ս. Ալեքսանյան
Քարտուղար	_____	Ա. Սարգսյան